



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄ

15 Հունվարի 2009, 40 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *n p n 2 ու մ է.*

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հանրապետական գործադիր մարմինների 2009 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում սույն որոշման N 1 հավելվածում ներառված միջոցառումների իրականացման ընթացքի, իսկ ընթացիկ տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության ծրագրի կատարման մասին:

3. Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում սույն որոշման N 2 հավելվածում ներառված գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

u_files/file/decrees/kar/2009/01/09_0040_1.pdf

u_files/file/decrees/kar/2009/01/09_0040_2.pdf

Տիգրան Սարգսյան

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|--|--|---|----------------------------------|-----------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 149. «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գիտության ոլորտի զարգացման առաջնայնությունների և հեռանկարների ամրագրում | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2009թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 150. «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գիտական աստիճանաշնորհման միջազգայնորեն ընդունելի համակարգի ձևավորում և զարգացում, գիտական աստիճանների ճանաչելիության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2009թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 152. «Գիտության ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ-ում գիտության ոլորտի զարգացման գերակա ուղղությունների ամրագրում | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2009թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 154. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գիտության ոլորտում բարեփոխումների համար օրենսդրական հենքի ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2009թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| Պատասխանատու մարմինը | Գերակա խնդիրը | Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե | 93. Գիտության ոլորտի բարեփոխումներ՝ հայեցակարգային, ռազմավարական և իրավական հիմքերի ապահովում | <ul style="list-style-type: none"> - Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգի մշակում - գիտության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում - «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում |